





Երուսաղեմաց ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ձ Ե Բ
7/ XI 1922

ԱՐԱՐԱՏԻ ՏԵՐԱՎԻՐԱՅԻ-
ՍԵՐԱՅԻ ՀԵՐԱՑԱՅԻ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱՎԻՐԱՅԻ ՀԵՐԱՑԱՅԻ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ա Ե ՐԱՄԻՆ ՄՊԱԳԵՐԵԱԼ.

— Հ Հ Հ Հ Հ —

Ե Հայրապետութե Տէ ՅԱԱ-
Հ Ա Ն Ե Ա Ի Կ ա ր բ ե ց ւ ո յ
ս ր բ ա զ ն ա ս ո ւ ր բ կ ա թ ու լ ի-
կ ո ս ի ա մ ե ն ա յ ն հ ա յ ո ց :

Հ րամանաւ Տեսուն Ի Ա Գ Ա Տ Ա-
Ս Ա Ա Ա Յ ի շ ա ն ա զ ն ի ջ ա լ ա-
լ ե ա ն ս ր բ ա զ ա ն Ա , բ ը ե պ ի ս կ ո-
պ ո ս ի և մ ե տ ը ա պ ո լ տ ի հ ա յ-
ո ց հ ա մ ա յ ն Ա . ղ ո ւ ա ն ի ց :

Ե Ր Ա Մ Ի Տ Ե Ա Պ Ա Ն Ի Ե
Յ ա մ ի Տ Ե Ա Պ Ա Ն 1855:

Օ գոյշ լեռնու՞ մէ՛ ու իշխ ոք զիշկ հողապ-
տիշէ ճամպարմասւ լեռնէ և անոսի խոք-
է ու լեռնէ, որտ ըստ մարդկան աւանդութ-
ե ըստ առքեց աշխարհին՝ և ոչ ըստ
Յի Քի. (Կոշ. թ. 8):

4. ♩ անայ նախանձ ՚ի չարուի
ընդ քաջութեան. և որոմն յառաջ
մատուցեալ՝ բուսադատէ զցորենոյն
կարծիս մատուցանել. և կերպարանօ-
քըն՝ ցորենոյն ջանայ նմանիլ. բայց
Ճաշակօքն ՚ի ձեռն ընտրողացն կը շ-
տամբեալ յանդիմանի. Ե՛ւ սատանայ
բանսարկուն կեղծաւորեալ կերպա-
րանի ՚ի կերպարանն լուսաւոր հըեշ-
տակաց. (Կոշ. թ. 18: թ. Կոշն. ժ. 10.
14.) և ջանայ ոչ թէ զի ՚ի նոյն
տեղի մատիցէ ուստի կործանեցաւն,
զի եբը զսալդարբնաց անոշտ և ան-

վաղ սիրտս ստացեալ առանց զըշջ-
ման այնուհետեւ զբարսն յանձին բար-
ձեալ բերե, այլ զի զայնոսիկ որ ՚ի
հրեշտակօրէն գնացս զանձինս իւր-
եանց մատուցին՝ անխնայ խաւարին և
ախտաբեր անհաւատութե զգեցուցա-
նիցէ ամրութեամբ :

2. Ի՞ազզում գայլք շըջին ՚ի հան-
դերձս գառանց. (Առարթ. Է. 15.)
Հանդերձ զգեցեալ ունին, այլ ոչ
եթէ մագիլս և ժանիս. այլ զհեզու-
թեան և հնազանդութե զհանդերձ
առեալ՝ ՚ի պատճառս խոնարհութե
կերպարանաց՝ զանմեզս սրտիւք պատ-
թել՝ պատրաստեն: Ե՛ւ մահաբեր թու-
նիւք զանօրէնուե ժանկն յատամանցն
ահտի իւրենց ներքուստ անտի արտա-
քս փսխեն: Ոիթոյ են մեզ այսուհետեւ
չնորհք ածուե, միտք զգաստուե, աչք
հայեցողք. զի մի զոր ոմն իբրև ըզ-
ցորեան կերեալ՝ տգիտաբար ՚ի կո-
րուստ մատնիցուք. (Առարթ. գ. 20.)
և մի զգայն գառն համարեալ՝ որս
նորա լիցուք. և մի զսատակիչ մա-
հաբեր գաղանն զսատանայ ՚ի հրեշ-

տակ համարեալ՝ ընկղմիցուք ՚ի նման
նէ։ Օ ՚ի շուրջ գայ նա իբրև զա-
ռիւծ մնչնչելով, և խնդրէ թէ զն
կարասցէ կլանել որպէս և գրեալէ։
(ա. Պէտ. Ե. 9. ա. Անա. Հա. 4.
Օ. Պէտ. Ք. 1. Յայտ. Բ. 10. ա. Ծաւ.
Բ. 10.)

5. Ա ասն այսորիկ սուրբ եկեղե-
ցի խրատէ։ Վասն այսորիկ ոմք ձառք
ընթերցուածոցս այսորիկ, զի ած-
պաշտութեան օրինակքն յերկուց կար-
գաց հրամանի հաստատեալ են։ այ-
սոքիկ ՚ի հրամանակար ՚ի կամակարգ
բանից աստուածութեան և ՚ի գոր-
ծոց բարութենէ։ այլ ոչ կամակար
հրամանքն առանց գործոց բարու-
թեան ընդունելի են առաջի աստու-
ծոյ։ և ոչ որ առանց գործոց բարութե
հրամանակարքն գործին՝ ընդունելի
են աստուծոյ։ Օ ՚ի զի՞նչ օգուտ է
գիտել զվարդապետութիւն աստուա-
ծութեան ուղղութեամբ՝ և գոր-
ծել չարաչար։ (Յայտ. Բ. 28. Պատ-
ղապ. Բ. 27.) Ե՛ւ զի՞նչ օգուտ
է դարձեալ զգաստութեամբ շըբ-

ջել բարւոք, և հայհցել ամբարշտու-
թեամբ:

4. Արդ՝ մեծ են ստացուածք հը-
րամանական կամաց վարդապետուիքն.
և պիտոյ են միտք զգաստութեան:
Ի՞անզի բաղումք են, որք կապուտ
կողոպուտ առնեն ձարտարաբան բա-
նիւք. և ունայնութեան խաբէութեն
պատրանօք: Որք 'ի հեթանոսութեն
են ձարտարութեամբ և թրթրակ
լեզուի խաբէութեամբն գովեն զմեզ:
Օ ի մեղը կաթե առէ 'ի շրթանց
կնոջ պունկի: (Աստի Ե, 3): Խակ
որ 'ի թլփատութենէ անտի են՝ 'ի
գրոց սրբոց պատմեն չարաչար զմա-
տուցեալն պատրանօք 'ի խաբէութեն
'ի մանկութենէ կահխեն 'ի գիրս
մինչ 'ի ծերանալ և 'ի տղիտութեան
մեռանին: Խակ հերիտիկոսաց ման-
կունքն քաղցրութեամբ՝ և օրհնու-
թեամբք պատրեն զսիրտս անմեղաց.
իբրև զմեղու քաղցրութեամբ՝ ող-
ջունիւն Վրիտիտոսի գամբարշտութե-
ժանկախառն կարգսն ծածկեալ 'ի
ներքս՝ ջամբեն: Ա ասն այսը ամե-

նայնի միանդամայն ասէ տերն՝ զգոյշ
լինիջիք առէ՝ գուցէ ոք զձեզ մոլո-
րեցուցանիցէ: (Մատթ. նդ. 50.) վե
այսորիկ և հաւատոց վարդապետու-
թիւնք՝ և որ ՚ի նմա պատմութիւնքն
լինին:

50. Այլ մինչչե՞ի հաւատոց կարգ-
ուն մատուցեալ բարոք թուփի ինձ
այժմիկ կարծ՝ ՚ի կարծոյ ճառիւք՝
հրամանակարգ բանիցն սկիզբն առ-
նել: Օ ՚ի մի զբագմութիւն ճառիցն
և որ ՚ի մէջ ժամանակքն են աւուրցն
մուացութիւն ՚ի մէջ արկցուք այ-
նոցիկ՝ որ ՚ի մեղ դիւրին իցեն: Այլ
զի այժմիկ կարծ՝ ՚ի կարծոյ զգլուխ
ճառիցն փոքր ՚ի շատէ ինչ սերմա-
նել՝ մի մուացեալ լիցուք զնոյն լայ-
նագոյնս և պարարտագոյնս ևս ասել.
և ապա յարդիւնաբարութիւնս մատ-
չիլ: Աերեսցեն և դոքա մեղ՝ որ այժ-
միկդ աստ կան: որ կատարելագոյնքդ
իցեն: որոց ճաշակելիքն իւրեանոց
կրթագոյնք իցեն առ ընտրութիւն
բարեաց և չարեաց, եթէ զտղայա-
գոյն և զկաթնակերագոյն ժամանա-

կաց զընծայութիւն ճառիցս մատուցանենք միանգամայն անդէն, զի և ծարաւագոյնքն և կարօտագոյնքն օգտեսցին։ Եւ որ լի գիտութեամբն իցեն՝ զայն որ յառաջ գիտիցեն՝ վերըստին արծարծեալք լուսաւորեսցին։

արարածութեամբ անհանուններ։

6. Այս զառաջինն ՚ի մտի ձեռում տնկեալ հաստատեալ կացցեն հրամանակար կարգն աստուածութե։ զի աստուած մի է։ (ար. Յառագ. բ. 21) անծին։ Միայն անձնիշխան։ անարատ առանց յանցանելոյն Ոչ յումէքէ ծնեալ և ոչ ունի զոք կենաց իւրոց փոխանակ։ Ոչ ժամանակօք զկեանս սկսեալ։ ոչ ընդ սկսմամբ է՝ և ոչ ը վախջանաւ։ (ար. Տիմ. զ. 16։ Յայտն. ժը. 17.) և զի նոյն ինքն արդար և նոյն բարերար։

7. Ո՞ի եթէ երբէք լուիցես և ասիցէ ոք ՚ի հերիսիովտաց անտի, այլ է արդար և այլէ ըարերար։ անդէն ՚ի մտի եղեալ գիտասջիր վաղվա-

ղակի զհերիսիովտաց զմահաբեր ժան-
գոյն զդժնդակութիւն։ Օ Ե իշխե-
ցին ոմանք յօրինաց անտի զմի աստ-
ուածն բաժանել բանիւք իւրեանց։
և այլ արարիչ ասացին ոգւոյ և տէր
և արարիչ մարմնոյ անմտութ և ա-
նօրէնութ և ամբարշտութ վարդապե-
տեցին։ Օ իարդ մարթ և պատշաճ
է երկուց տէրանց մի ծառայ լինիւ-
այր դու։ Օ Ե առ ինքնին ասաց յա-
ւետարանսն եթէ ոչ ոք կարէ երկուց
տէրանց ծառայել (Մատթ. 7. 24.)։

8. Ա. Յ լ յայտ է զի մի է աջ միայն
ոգւոց և մարմնոց արարիչ։ մի է ա-
րարիչ երկնից և երկրի։ Հըեշտակաց
և հըեշտակապետաց։ որ ամի արարիչն
է։ Ի այց միոյն մին ՚ի միայնոյն։ Հայր
յառաջ քան զյաւիտեանս։ միոյն մին
՚ի միածին որդւոյ նորա տեառն մե-
րոյ Հիսուսի Քրիստոսի։ որով արար
զամենայն երեսոյթս և զաներեսոյթս։
Ա այս տեառն մերոյ Քրիստոսի,
որ ոչ վայրօք իւլիք փակեալ բովան-
դակի, և ոչ փոքր է քան զերկինս։
քանզի երկինք դորձք մատանց նորա

Են. (Ապահ. ը. 40.) և զերկինս ամենային 'ի բոլին իւրում ունի: սա ամենեցուն մի է. և զատ յամենեցուց:

9. Ո՞ի համարիր զնա փոքր քան զարեգակն կամ համեմատ. զի որ զարեգակնա զայս արար՝ պարտ և պատշաճ է՝ զի ինքն մեծագոյն լաւագոյն և առաւելագոյն լուսաւորութեցէ. և ոչ ամենեին մտանէ 'ի հաշիճ ընտրութեան ընդ արարածս:

Յառաջագէտ է ամենայն լինելոց. և զօրագոյն է քան զամենայն. գիտէ և առնէ որպէս և կամի. ոչինչ է նմակարգօք անցաւոր ժամանակաց. ոչ ծննդեամբք և ոչ բախտիւք. ոչ օրահասօք փակեալ. ամենայնիճ կատարեալ զամենայն աղքա քաջութեամբ զօրութեան՝ յինքեան 'ի ներքս ունի:

(Եբ. ա. 5):

10. Ոչ մաշի և ոչ աճ'է. այլ նոյնպէս այնպէս և 'ի նոյն օրինակի: Պատրաստեալ ունի տանջանս մեղաւորաց, և պսակս արդարոց: (Պատակէ. ժե. 2: Խճառի. դ. 7: Ապահ. իւ. 46: և ժդ. 41:): Երդ՝ որովհետեւ

մոլորեցան՝ ի միոջէ աստուծոյ անտի
՚ի պէսպէս խորհուրդս, բազումք ո-
մանք զարեգակնդ աստուածացուցին.
զի իբրև արևն մտցէ՝ զգեշերոյն ժա-
մանակ անաստուած կայցեն:

Ե՛ս ոմանք զլուսինդ աստուածա-
ցուցին. զի տունջեանն հասանելով
չափ անաստուած իցեն: Ե՛ս այլք զին-
չըս աշխարհի. ոմանք Ճարտարուին.
ոմանք զերկրաւորս. ոմանք զցանկու-
թիւնս:

11. Խակ կեսքն բնաւ. որ իդամոլքն
էին՝ զկնոջ մարդոյ ուրումն պատկեր
կուռս ՚ի բարձունս կառուցեալ աստ-
ղիկ անուն եղեալ՝ երեելոյ անտի
ախտին երկիրպագանէին: (Պ. Յառագ.
Բ. 23:): Ակսքն ընդ ոսկոյդ Ճաճան-
չաւոր փայլիւնդ զարմացեալ և որ
այլ ինչ հիւթանիւթք իցե՞ո սմին
նման աստուածացուցեալք պաշտեն:

Արդ եթէ ոք զմիահեծան բանն
աստուածութեան ՚ի սրտի և ՚ի մտի
իւրում հաստատեսցէ՝ և ամենայն մը-
տօք ՚ի սմին բնակեսցէ՝ զամենայն
չարեաց կուապաշտութեան առ հասա-

բակ՝ և զանօրէն հերիսիովտացն ըղ-
մոլորութեան գհոսանս ցամաքեցուս-
ցէ:

Բ. Ա. Պահ Քրիստոնէ:

12. Եաւ յառաջ այս յանձին քում
հաստատեալ կացցէ հաւատովք. այլ
հաւատած դու յորդէն աստուծ ց. (Յոհ.
թ. 55: Ղ. 27:), 'ի մին միայն 'ի որ
մեր Յիսուս Քրիստոս. որ յաստու-
ծոյն աստուծ ծնեալ. որ 'ի լուսոյ
լոյս ծնեալ որ նմանէ ամենայնին
ծուողին իւրում: (Յոհ. ժ. 4. 10:) Որ
ոչ եթէ ժամանակօք ինչ զէութիւնն
ծնեալ է, այլ յառաջ քան զամենայն
յաւիտեանս մշտնջենաւորութեամբ
և անհասութեամբ 'ի հօրէ ծը-
նեալ (Անդ. ժ. թ. 5.) զիմաստութիւնն
աստուծոյ և զզօրութիւնն և զարդա-
րութիւն զանդստիւնն որ ընդ աջմէ հօր
յառաջ քան զամյաւիտեանս նստեալ
(Անտոն. թ. 9): Օ 'ի ոչ եթէ որպէս
ումանք կարծեցին, եթէ յետ չարչա-
րանացն պսակեցաւ. որպէս թէ յաս-
տուծոյ վասն համբերութե առեալ

Եցէ զընդաջմէ աթոռն. այլ 'ի սկզ-
բանէ որպէս և էր ծնեալ (Ա'կ. Է.
2. Ա'տահ. ը. 22. 30. 31.). յաւիտե-
նից ծնեալ՝ միշտ յաւիտենից ունի
գարբայական իշխանութիւն:

13. Ի՞նդ հօր հատեալ աստուած 'ի
սկզբանէ, և զօրուի և իմաստուի ող
յառաջագոյն ասացեալ ընդ հօր թա-
գաւորեալ և տմի արարիչ. (Կաղ. ա.
16. Յօհ. Թ. 3. 4. 8.). վասն հօր ա-
ռանց պակասուե 'ի փառս ածուե. և
գիտէ զծնիչն և վաշվաղակի: Ողս և
աւետարանն ասացել. եթէ ոչ ոք գի-
տէ զորդի, եթէ ոչ հայր. և ոչ զհալը
ոք գիտէ, եթէ ոչ որդի: (Ա'տահ. Ժ. ա.
27. Յօհ. Ղ. 45.): Ե՛ւ մի օտարացու-
ցանէր 'ի հօրէ զորդի. և մի խառ-
նակեալ որդէհօրուի երևեցուսցես:
այլ հաւատած դու եթէ միոյ ոյ միա-
ծին մի է որդի յառաջ քան զամ յա-
ւիտեանս՝ բանն ոյ. (ա. Կաղ. ը. 6.).
ոչ եթէ 'ի բերանոյ կարգի և յօդ
լուծանի, և ոչ որպէս բանք պատ-
ուաստելով կարգին. այսմ նմանեալ.
այլ բան որդի բանաւորացս և հոգե-

ւորացս արարիչ։ Ռան որ ելեալ 'ի
հօրէ և խօսի ինքնինս այլ վասն այսը
տմի եթէ ած տացէ լայնագոյնս և
պարարտագոյնս ասացից ձեղ. զի ոչ
եթէ մոռահամք մեք զոր առաջի ար-
կաքդ, այլ այժմիկ ծայրաքաղ արարաք
վասն ձերոյ հրաւիրանաւ հաւատոցդ։

Պ. Ա. առն որ ՚ի իռահէն։

14. Այլ հաւատան դու, թէ սա է
միածին որդի այ. որ վասն մերոյ մե-
ղաց յերկնից էջ յերկիր. զհաւասա-
րակից մարդկուն մերոյ յանձն իւր
առեալ զչարչարանս։ (Փէլ բ. 7.
Ղաւէ. ա. 55.): Եւ ծնաւ 'ի սուրբ
կուսէ անտի 'ի հոգւոյ սրբոյ ոչ կար-
ծեօք և ոչ իբրև ցնոր ինչ ևս առա-
չօք և երկելով մարմին զգեցել. ոյլ
Ճշմարտիւ։ Եւ ոչ իբրև ընդ փող
ինչ անցել է կյան. այլ մարմին ըշ-
գեցեալ Ճշմարիտ յանդստին 'ի նմա-
նէ և եկեր իբրև զմեղ Ճշմարիտ
(Պարծ. ա. 4.). և էարբ իբրև զմեղ
Ճշմարիտ. և կաթնասուն եղե իբրև
զմեղ Ճշմարիտ։ Օ ի եթէ իբրև ցնորք

առ աչօք էր ծնունդն, ապա իբրև
առ աչօք ցնորբ էր փլկութեն:

15 Ալկին Քնա մարդ էր ող էրն
և ած էր որ ոչն երեշը. (Յօհ. Ժդ.
40:). ուտեր իբրև զմարդ Ճշմարտին.
զի զգեցն էր զչարչարակիցս մեր
իբրև զմեզ. այլ կերակրեց Դինդ հա-
զարն ՚ի հինդ նկանակէ իբրև զած:
(Առաք. Ժդ. 21: Յօհ. Ժա. 44:)
Մեռաւ իբրև զմարդ Ճշմարիտ. և
յարոյց զմեռելսն իբրև զած, Ակն ՚ի
քուն եղե ՚ի նաւի անդ ող մարդ. և
յարուցն գնայը ՚ի վը ջուրցն իբրև
զած: (Առաք. Դ. 38: Յօհ. Դ. 19:):

Դ. Առան Ետք ի՞ն:

16. Ան եկն ՚ի խաչ վ՛ս մեռոյ մե-
ղայն Ճշմարտին (Թ. Պէտ. Դ. 4:). Խակ
արդ՝ թէպէտ և յուսահատ կամիցիս
լինիլ ինքն տեղիս Ճշմարտին կշտամ-
բել յանդիմանէ զքեզ երանելիս այս
գողդոթայ, յորում այժմիկ իսկ ժողո-
վել կամք վ՛ս այնորիկ որ եկն ՚ի վը
նը խաչեցաւ. (Առաք. Եկ. 33:). և
փայտին խաչի արդ ամբ տիեզերք իսկ

լցել են: Ակն և խաչեցաւ ոչ վ՛ս իւրոց
ինչ յանցուածոյ: այլ զի զմեղ՝ ի մե-
րոց մեղաց աղատեցուացէ, էառ յանձն
զարհամարհանսն և զապտակս իբրև ըշ-
մարդ: զի յայտնի գիտացեն ամբ արա-
րածք թէ ած էր: Օ ի արեգակն իբրև
ետես զնորն նշկահել՝ պակասեցաւ կո-
րեաւ գայթակղեցաւ դոշութ: (1) սակ:
Եգ. 44:): զի ոչ կարաց հանդարախիւ-
տես, և անհն տեառն անարգանաց:

Ե. Ա տոն. Ըստ Հովհաննես:

17. ՚Ն գերեզմանի վիմին եղաւ
իբրև զմարդ: այլ անդէն վաղվաղակի
վ՛ս նը յահէ անտի վէմք պատառեցան
(Մատթ. ՚Եկ. 51: 59:) Ակն էջ յան-
դունդս դժոխոց: զի և անտի զարդարսն
փրկեսցէ: *) ՚Ծրդ եկ ասաւ դու-
ցիս, կամէիր դու վ՛ս կենդանեցս, զի
վայելեսցեն ՚ի շնորհս ՚Եկ. և այդ զի ոչ
թերես ամենեքեան ՚ոքք իցեն, զի որ
յադամայ հետէ բազմաժամանակեայ
արգելել կային և փակեալ, զիանը

*) (ա. Պիտիք. ՚Եկ. 18: 19: 20:)

ոչ գտանէին զփրկութե՛ աղատութե՛:
 Պանէ յայսմհետէ եսայի մարգարէն
 շլուսոյն ձառագայթո. (Եսոյ. Տգ. 4.)
 վը հը մեծաբարբառ գուշակէր. արդ
 հէ կամէիր թէ թագաւորն իջեալ
 փրկեսցէ զքարողիչսն: Պատիթ էր
 անդ, և սամուել և ամ մարգարէքն
 և յովհաննէս ինքնին իսկ գլխովին. որ
 ասէրն ՚ի ձեռն այնորիկ զոր առաքեցն
 Պատ ես այն որ գալոցն իցես, եթէ
 այլում ակնունիցիմք մեք. (Ապա. ժա.
 5.) հէ կամէիր թէ իջեալն փրկես-
 ցէ զայնպիսիսն:

Դ. Ապան յաբութեան:

18. Այլ որ էջնյանդունդս անդ
 դժոխոց, գարձելել' ի վէր և որ թա-
 զեցաւն յն՝ յարեաւ երեքօրեայ ձըշ-
 մարիտ: (ա. Արք. ժե. 4.) Ապա թէ
 երբէք այդն առնիցեն հրէայքն, ա-
 րագ արագ ը առաջ լինիջեր անց և
 ասասջիր քունան երեքօրեայ թիգոր-
 տոյ ձկանն եկն ել' ի վերեակա (Յան. բ. 1.). և քն երեքօրեայ ոչ կարէլ յա-
 նել յերկըէ՝ յոսկերսն եղիսէի մուեցո

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՎԱՐ

մերձեցն լ յարեւ. (Պ. Տօռագ. Ժ. Պ. 21.)
և մարդկան արարիչն Վաս զօրութ հօք
նու արագ արագ դիւրագոյն ևս ար-
դեօք յառնէր: Այլ յարեւաւ Ճշմարիտ
և յարուցն երեւեցաւ աշակերտացն.
և վկայ նը յարուեն երկոտասահ. ա-
շակերտքն են: (Թ. Կարճ. Ժ. 5.):
Այս բանիւք լոկովք շնորհել վկայենն
այլ մինչ ՚ի տանջանս և ՚ի քարշանս
և ՚ի մահունս ՚ի վլու Ճշմարիտ յարուեն
պատերազմեալք: (Գութի) Խասկ արդ ՚ի
բերանոյ երկուց և երից վկայեց
հաստատել ինի ամբ բան ող և ասեն
գերք: (Բ. Օթի. Ժ. 15.): արդ երկո-
տասահնք են աւասիկ, որք վկայենն վլու
Տն յարուեն. և իցե՞ ոք որ երկուցն գտանիցի վլու յարուեն: Այլ զընթացսն
համբերութ կատարեց տրն մեր Յնու
Վաս. և զմարդիկ ՚ի մեղաց փրկեաց:

19. Այլ միւս անգամ յերկինս յըն-
դունել ամպոյն յորժամ վերացաւն:
(Գութ. Թ. 6.). և հըեշտակք շուրջ
զնովաւ կային. և առաքելքն ինքննք
տեսանեին: Ապա եթէ ոք ՚ի բանից
անտի յայնցանէ Ծերահաւատիցէ այսմ

զօրում, հաւատասցէ զոր այժմն տեսանեմք: Ամբ թագաւորք՝ ի մեռանիլն իւրենց շիջուցանեն ըսկեանս և զզօրուինս իւրենց: իսկ Քն ՚ի խաչելել յամ տիեզերաց երկրպագութելունի: Օ խաչելուքալողեմք. և դողան դեք ամբ: Իռազումք ըստամանակս ժամանակս ՚ի խաչելին: այլ ոչ եթէ դեք յանուն նոց ելանէին: այլ խաչելոյս սյսորիկ զանունն ՚ի վը կարդացել զդես ամբ առ հասարակ փախստական առաջի արկել հալածական տանին: Այսուհետեւ մի յամօթ համարեսյուք մեք զխաչն Քն: այլ թէպէտ և ոք ծածկիցէ, դու յայտնապս ՚ի վը ճակատոյդ նշանակեսջիր. զեդեքն զնշան արքունի տեսել յառաջագոյն՝ վաղվաղակի դողութ փախստեայ գնասացեն:

20. Իռայց առնիջիր զնշանս յամ ժամանակի. յորժամ ուտիցես, յորժմ ըմպիցես. ՚ի վը ամբ նկանակի, ՚ի վը ամբ բաժակի անպակաս. եթէ նստիցես, եթէ յաւնիցես, եթէ խօսիցես, եթէ շրջիցիս, եթէ ըսկողէն մը-

տանիցես։ Օ՞ք որ ՚ի յայսմ գողգո-
թայիս խաչեցաւ և ՚ի սմին թաղե-
ցաւ, աստի էջ ՚ի դժոխս. և անտի
եկն ել առ մեզ Եւ ը այն լեառն
ձիթենեաց որ յարեւելից կուսէդ է՝
վերացաւ յերկինս ՚ի ձայն հօր. զի
կարդայը և ասէը. Եկ նիստ ը աջմէ
իմմէ մինչ եղից զթշնամիս քո պատ-
ուանդան ՚ի ներբոյ ոտից քոց, (Պատէ.
Եդ. 50։ Ասուն. Ճժ. 1.։)

Է. ԱՌ Քառասուր Քւառգում Գուշակեանս
ՎՅ:

24. Ա.յս ՅՆ ՎՐ որ ելյերկինս
գայ միւսանգամ ոչ յերկըէ, այլ յերկ-
նից. (Յայտ. ա. 6). այլ զի ասացի
թէ ոչ յերկըէ. զի բաղում սուտ քոք
գալոց են յերկըէ։ (Ասուն. Եդ. 5.։)
Ա.ըդէն իսկ ո՛պ և տեսերդ՝ բաղումք
սկսան ասել՝ ես եմ քոն, և մերձնել է։
Ա.ըդ այսուհետե գայ պիղծն անապա-
տի սուտն՝ քո ահուանմէ գայ։ Իսկ
ուռ Ճշմարտիւ ՎՅ որդւոյն ոյ միա-
ծնին՝ մի այսուհետե յերկըէ ակն ունի-
ցիս. այլ յերկնից. քան զամ փալակն

լուսաւորագոյն ամենեցուն երևել և
՚ի հըեշտակաց պաշտել։ Օ ի եկեալ
դատիցէ զմեռելս և զկենդանիս. (յուղ.
թ. 15.) և թագաւորեսցէ զթագաւո-
րուեն յաւիտենական զանմահն (Պատ.
է. 24.)։ Ա.լդ՝ զգոյշ լինիջեք ինձ
յայդմ վայրի. զի բազումք են որ ասենն
թէ գոյ կատարած արքայուեն Քի.

Ե. Ա. Հագոյն Վիճ:

22. Ա.յլ հաւատաց դու և ՚ի հոգին
նբ կենդանի. և զուղիլ հաւատն կալ
վո նը. քանզի բազումք ե՞ն, որք օտա-
րացեալք ե՞ն ՚ի հոգւոյն սրբոյ. որ
զանօրէն վարդապետուեն իւրենցու-
սուցանեն. Ա.յլ դու Եկ ուսիր՝ զի մի
է հոգին նբ. առանց բաժանման է
և բազմազօր. զամբ զօրացուցանէ, և
ինքն յինքն ոչէ բաժանել։ Որ գիտէ
զիսորհուրդս և քննէ զամբ զիսորս մը
(Երեն. Ժ. 20. :)

Որ ՚ի վը առ մերոյ ՅԵ ՔԵ ՚ի
նմանուե աղաւնւոյ իջանէր. և յօրէնս
և ՚ի մարգարէս զօրացաւ. (Պատ. Դ.
22.) և այժմիկ ՚ի ժամանակի մկնտուես

Դրոշմէ զոգիս և զմարմինս ձեր. որոյ
կարօտի ամբ մտաւոր և հոգեոր, և
խնդրէ սըբուն ՚ի նմանէ, Օ որ Եթէ
հայհոյել ոք կամիցի, ոչ գոյ թողուն
նմայ այսմ աշխարհի՝ և ոչ յաշխար-
հին յայնմիկ, որ յաւիտենիցն է:
(Մատթ. Ժբ. 32:):

23. Բնդ հօր և ը որդւոյ ՚ի պա-
տիճ փառաց փառաւորելէ հաճապաղ.
որոյ կարօտին և խնդրեն աթոռոք և
պետունք և տերութիւնք և իշխանու-
թիք: Օ ի մի է ած հայր տն մերոյ
Յե Քե. և մի տր Յե Քե. որ մին
է այ միածին որդի. և մի է հոգին
նք, որ զամենեամին սըբունք ընու, որ
յօրէնս և ՚ի մարգարէս ՚ի հին և ՚ի
նոր կտակարանս խօսեցաւ: (Արք. ը.
6:): Օ այս դրոշմ ունիջիր ՚ի մտի
քում յամբ ժամանակի. զոր այժմ առ
ժամանակ մի ծայրաքաղ արարաք. ա-
պա թէ տացէ տր՝ գրոց վկայութե
հանդերձ յայտնապս ը կարգի առացել
լիցին Օ ի պարտ և պատշաճ է
վուածեղէն և նք խոհըդոց հաւա-
տոցն միտդնել. և մի որ փոքր ինչ

բան իցէ՝ առանց վկայուեց գրոց
սըթոցցուցանել. և ոչտարապար-
տուց մտահածոյ բանիւք և պա-
ձուձանօքն թօթափել. Արդ մի
ենձ որ զայսասեմհաւատար վայ-
րապար եթէ ոչ զփորձ պատմու-
թեղ զամ՞ի գրոց նբցյայտնութ-
ցուցից. Օ ի վկայուենս այս հա-
ւատոցս մերոց՝ ոչ ՚ի բան գիտուէ
է, այլ ՚ի յանդիմանուէ վկայուե-
գրոց սըթոց:

թ. Ա առնե սգւոց Տարդիանէ

24. Արդ՝ յետ գիտուենս այսորիկ
ոք և պարկեշո հաւատոց՝ և զանձն
քո իմասջիր գիտել այսուհետեւ զինչ
ես դու. զի կըկին է մարդու, շինել
՚ի շնչոյ և ՚ի մարմնոյ. ող յառաջագոյն
ասացաք եթէ ած է՝ որ շնչոց և մարմ-
նոց արարիչ նոյն է. Ե՛ւ գիտասջիր, զի
շունչ ունիս անձնիշխան գործ ոյ՝ գե-
ղեցիկ ըս նմանուե պատկերի կերպա-
րանաց արարչին արարեալ անմահ.
(Աշւէ. Ժէ. 1.) վս ոյնը որ անմա-
հացոյցն՝ կենդանի բանաւոր՝ առանց

ապականուել վե՛ շնորհացն (այ), եշ-
խանուել առել գործել զինչ և կա-
միս:

25. Օ ի ո՞չ եթէ ըստ ծնունդս լի-
նի մեղանչել և ո՞չ ըստ դէպ բախտից
պուճկիւ և ո՞չ ոնկ բաբանջեն ոմանք
աստեղացն խառնակուելք խոնարհեալ
տագնապեն՝ զի փախստեայ լինիս խոս-
տովանել զչարիսն քո և անմեղ աս-
տեղացն դնես զմնասն քո:

Ամ հայիր այսուհետե յաստեղագի-
տուեն. զի վե՛ այսորիկ ասեն ո՞ք գիրք:
Ակեսցեն կացցեն փրկեսցեն զքեղ աս-
տեղագիտքն երկնից. (Առաջ. ԽԵ. 13:).
ահաւասիկ ամենեքին իբրև զխուին
՚ի հրց այլեսցին. և ո՞չ կարասցեն
փրկել զանձինս հոց ՚ի բոցոյ անտի:

26. Ի՞այց և զայս գիտասջիք, զի
մինչեւ եկել են հոգիքն յաշխարհս
յայս, ոչինչ են մեղուցել. այլ իբրև
գան, ապա ՚ի կամաց բարուցն մեղան-
չեմք: Ի՞րդ մի՛ ումեք անսար դու,
որք պատմենս եթէ ահաւասիկ իսկ
գրել է թէ զոր ինչ ոչ կամիմ զայն
գործեմ: (Հառակ: Խ. 15:). այլ յուշ

Եեցի քեզ որ ասաց թէ կամիջիք և
լուծիջիք ինձ: (Եսայ. ա. 19): Եւ
դարձել ասէ՝ զոր օրինակ պատրաս-
տեցիք զմարմինս ձեր 'ի ծառայուն
անօրէնուն յանօրէնուն, սոյնաղ պատ-
րաստեցէք զմարմինս ձեր 'ի ծառայ-
ուն արդարուն 'ի սըբուն (Հուօն. գ.
19): Եւ յիշեսջիր դու գնորին առա-
քելոյ զբանսն, զի ասէ թէ՝ և որպէս
ոչ ընտրեցին ած ունել 'ի սիրոս
իւրենց: (Հուօն. ա. 28.): Եւ դարձել
ասէ՝ զի գիտունն ոյ յայտնի է 'ի
նա: (Հուօն. ա. 19). և զի ասէ՝ զաքս
իւրենց խցին: Եւ դարձել այլ որ ա-
սէ մեղադրութ, ես տնկեցի զքեզ այ-
գի պտղաբեր համակ ճշմարիտ. զի-
արդ դարձար 'ի դառնուն այգիդ օ-
տարացել (Առեն. բ. 21.):

27. Ենմահ են ոգիքն և ամ ո-
գիք նման են, միմեանց արարց և կա-
նանց. բայց անդամքն միսյն ընտրել
են 'ի միմեանց: Ոգւոցս ոչ գոյ դաս
ը ծնողեանն բուսոցն յարդարագնացս
այլ 'ի բարուց անտի են երկոքինն միա-
ձև միանման յամի բարք ոգւոց: Ես

գիտեմ զի կարի շատ խօսիմ. և ժա-
մանակս դեռ զանցանէ. բայց իսկ արդ
զի՞նչ լաւ է քան զվիրկուէն. ուչ կա-
միս աշխատ լինիլ և առնուլ պաշար
առ հերիսիովտացն հակառակուէն. Ոչ
կամիս գիտել զելս այսը անդը ճա-
նապարհիդ, զի մի ՚ի գահէ անկեալ
տգիտութեն կործանեսցիս. Օ ի թէ
վարդապետքն ոչ փոքր օգուտ հա-
մարին, զի դու զայս ուսցիս, դու որ
ուսանիսդ՝ ոչ առաւել ևս պարտիս
քաղցրութեամբ ընդունել զբանիցն
բազմուէն:

28. Խնքնիշխան են ողիքն. և սա-
տանայ զհրապութեն հրապութէ. (ա. Պէտ. Ե. 9). բայց տագնապել և ըս-
տիպել չունի իշխանուն. Եկարէ ՚ի
սրտի քում զխորհուրդս պոռնկութեն.
Եթէ կամեցար ընկալար. Եթէ չըկա-
մեցար՝ չընկալար. Օ ի թէ ՚ի հորկէ
պոռնկնէիր, իսկ ընդէ՞ր բնաւ զգե-
հենն պատրաստէր ած. Եթէ ՚ի բա-
րուց բուսոյ անտի՝ և ոչ կամօք ար-
դարագնաց լինէիք. ընդէ՞ր բնաւ
զանպատում պսակն պատրաստէր ած:

Հանդարտ է ոչխար. այլ ոչ երբէք
սա վասն հանդարտութեն պսակեցաւ
քանզի հանդարտութ նորա ոչ կամաց
է, այլ 'ի բարուցն բոււոյ ծննդեան
ծնեալ որ ըստ հմատ:

Ժ. Առաջ Տարբերակ:

29. Գիտացիր սիրելի՝ որչափ
ինչ մարթ էր առ ժամանակս ասել
վասն ոգւոց և շնչոյ, արդ ընկած
դու ըս կարին Ե՛ւ որ վս մարմնոյդ քո
բան է՝ մի ումէք անսար դու այնո-
ցիկ որք ասեն՝ օտարի ուրումն ոյ է
այս մարմին: Օ ի որք հաւատանն,
թէ օտար ոք իցէ մարմինս, իբրև
զօտար աման ՚ի պոռնկութիս ՚ի շնու-
թիս անխնայ համարձակապէս վարին:
Խսկ արդ զի՞նչ անդամ իցէ որ ըս-
գիւտն համարիցի ՚ի սքանչելի ա-
րարածս մարմնոյս այսորիկ: Օ ի՞նչ
այն որ պակաս ինչ է ՚ի գեղեցկութէ-
զի՞նչ այն իցէ, որ ոչ Ճշմարտութե-
կարգեալ իցէ:

30. Խսկ արդ ոչ է պարտ հայել
և տեսանել աչացս ըստաւորութ զհաս-

տատուիս։ Այսմ ո՞րպէս ականջացն ՚ի
կողմանէ եդելոց անխափան եդ զլսելի-
սըն։ Ամ ո՞րպէս հոտոտելիքն ընտրուի
գիտեն առներ ։ Եւ զիարդ զհագագն
՚ի տալ և յառ նուշ զշունչ մատակարա-
րել մարթէ։ Եւ կմլեղուն զիարդ կը-
կին կարգաց արբանեկ է ձաշակելցն։
Կամ ո՞ ոք ինչ ըստ ամոքելոյ բանա-
ւոր խօսիցն զօրուեն։ Կամ շնչափողն
՚ի ծածուկ ՚ի ներքս ամրացեալ զի-
արդ անդադար ունի զօդոցն և զշն-
չոց տալ և առնուշ զմատակարարուի։
Կամ զիարդ սիրան ՚ի ներքս անդ
միշտ անդադար զթնդիւն պատրաս-
տէ։ Ամ զիարդ յիւրաքանչիւր կարգս
բաժանին երակքն և նեարդքն բազ-
մացեալ ։ Եւ կամ ո՞վ է որ խոնաւ
ջշօքն և նեարդիւքն զոսկերս արար
վայել չափէս։ Կամ ո՞վ որ ղխոր-
տիկս ՚ի գեղեցիկ բաժինս բաժանեաց
զկէսն ՚ի զօրութիւն հաստատութեն։
և զկէսն ՚ի գեղեցկութիւնս և յընտ-
րութիւնս խորհրդով բաժանեալ և
զամօթոյ մարմինան ՚ի պարկեշտա-
գոյն կողմանս թաքրուցել պահէ։ Ամ

Ո է որ զբարս բուսոյ ծննդեան մարդկան առ ՚ի պսակելոյ ՚ի շնչին հաւասարութենէն անսպառ կարգեաց:

31. Արդ՝ մի ասեր դու ցիս՝ թէ մարմինն պարտ էր մեղաց. ընդէ՞ր ապա մեռեալն ոչ մեղանչէ: Դիմը սուր ՚ի ձեռին դիական, և սպանուե երկիւղ ինչ ոչ գոյ ՚ի հմաս Առ նորոգ դիակամբ երիտասարդի ած՝ անց՛ աղգի աղգի գեղերեսաց. և ցանկութիւն պոռնկութեան ամենելին ՚ի հմա ոչ ծնանի: Անդէ՞ր քանզի ոչ եթէ մարմին մեղանչէ անձամբ, այլ մարմնով շունչն մեղանչէ. իբրև գործի ՚ի նմա է մարմինն շնչոյն և իբրև հանդերձ արկանելի ինչ է շնչոյն Եթէ ՚ի սմանէ ՚ի պոռնկուի մատնի լինի նա պղծեալ. ապա թէ սուրբ շունչն բնակեալ է, լինի նա տաճար հոգւոյն սրբոյ: Աչ ես ասեմ զայս, այլ պօղոս առարեալն ասաց: Աչ զիտէք, առէ՝ զի մարմինք ձեր տաճար են հոգւորն սրբոյ որ ՚ի ձեզ է բնակեալ (Թ. Առջ. Ղ. 19.):

32. Անխայեա դու ՚ի մարմինս քո

Եթը զի տաճար իցէ հոգւոյն սրբոյ։
Ո՞ն պղծեր պրոնէութեամբ զմար-
մինս քո. մի թաթաւեր պղծութեամբ
զայդ գեղեցիկ պատմուճանդ քո։ Ա-
պա թէ պղծեցեր երբէք, եկ լուա
այժմիկ ապաշխարութեամբ։ Աըկը-
տեա լուա մինչդեռ ժամանակս է։ (ա.
Կոբն. վ. 41.)

53. Խսկ արդ՝ որովհետեւ ձառ ե-
ղե պարկեցութեան և զգաստութե,
առաւելադոյն լուիցեն զայս գունդք
գունդք միայնակեցաց. և դասք դասք
կուսանաց. որոց զհրեցտական կարդս
և զվարս յաշխարհի անձին առեալ
բերեն։ մեծամեծ պսակք ձեղ պատ-
րաստեալ եղեն եղբարք մի ՚ի չնչին
ցանկութեան զմեծապատիւ փառան
փոխանակիցէք։ Անդ հրեցտակաց գի-
րըս անուանք ձեր գրեալ են վասն
պարկեցութեան։ զգոյշ լինիջիք.
գուցէ անդըն ջնջիցիք վասն պունը-
կութեան։ *)

54. Պարձեալ հայեաց՝ գուցէ

*) (Ըստ: մ. 27:)

ունիւ ունիցիս զուխտն պարկեշտուե՞
և հպարտացեալ ամբարհաւածիցիս
'ի վերայ ամուսնացելոցն յաշխարհին
Օ ի պատուական են հարսանիքն՝ և
սուրբ են անկողինք նոցա տակ առա-
քեան, (Եբ. ժ. 4): Եւ դու որ
զսրբութիւնդ ունիս 'ի սկզբանէ՝ ոչ
յամուսնացելոց անտի ծնեալ ես: Եւ
դու որ զոսկուոյն ստացուածս ստացել
ես, մի զարծաթն խոտան համարիցիս:
Եւ մեծայոսք լինիցին որք զամուս-
նուեն օրինօք՝ յանձինս իւրենց բերեն.
որք զամուսնուի օրինօք՝ և ոչ եթէ
լիտուք վասն անչափ շնութեն վա-
րիցեն: Պանաչիցեն զժամանակս հան-
գուաեանս, զի կանխեսցեն յաշօթս. զի
հանգերձիւն հանդերձ սուրբ՝ զմար-
մինս իւրեանց 'ի ժողովս մատուցա-
նիցեն. որք վասն որդէծնութե՝ և
ոչ վասն անարդ ցանկութեան յա-
մուսնութիւնս խառնակեալ լինիցին:

35. Որ միակինքն իցեն՝ զերկ կա-
նայսն մի բամբասեալ խստիցեն. զի
լաւ լաւ է սրբութիւնն և սքանչելի.
բայց առանց մեղադրութեան է և

Երկրորդ հարսանիքն. զի մի պունը-
կեսցի տկարագոյնն. լաւ լաւ էր նո-
ցա, առ է առաքեալն, եթէ կացցեն մը-
նասցեն իբրև զիս. ապա թէ ոչ հան-
դարտեն, արանց լինիցին. զի լաւ է
ամուսնանալ քան զջեռնուլ: (ա. Արքն.
Է. 8. 9.): Այլ յամենայնի ՚ի բաց
հալածեալ լիցի պոռնկուին և շնու-
թիւնն և ամենայն իրք գիջութեան.
պահեալ կացցէ մարմինդ աստուծոյ
սուրբ. զի ած հայեսցի ՚ի մարմինդ:
Կերակրեսցի մարմինդ կերակրովք.
զի կացցէ և մի խափան պաշտեսցէ:

36. Եւ վասն կերակրոց այս ե-
ղեցին ձեզ հրամանք. քանզի բաղումք
են որք ՚ի կերակրութիւն մեղանչեն:
(Անէ. Լ. 34.): Օ ի են ոմանք որ
՚ի զոհել անդր անխտիր մատչին և են
ոմանք որ պահեալ պահեն, բայց դա-
տապարտեն զայնոսիկ որք ուտենն:
(Համ. Ժ. 3.): Եւ պէսպէս իմն ՚ի
կերակրոց բանի անդ ոմանց ոգիք
պղծին ՚ի տգիտութէ ուտելոյ անտի
և ոչ յօդտեալ պատճառաց: Եւ պա-
հեմք ՚ի մսոյ և ՚ի գինւոյ՝ ոչ եթէ

Եթե Պղպիղծ ինչ ատեցել խորշիմք ոյլ
վարձուց ակն ոնիմք։ Օ ի զանցաւոր
կերակուրս արհամարհեցուք, և վայե-
լել մարթասցուք յոդեոր և 'ի մշտն-
ջենաւոր սեղանն. զի այժմիկ արտա-
սուօք սերմանեալ, ցնծութեամբ հըն-
ձեսցուք 'ի հաճդերձեալ ժամանակի
անդ (Առաջ. Ճիե. 6.)։

37. Արդ՝ այսուհետեւ մի արհա-
մարհեր զայնոսիկ որք ուտենն. և վ՛-
տկարութեան մարմնոյն ճաշակեն։
Ա՞ի ինչ անգոսներ որք փոքր մի գի-
նի վասն ստամոքսին և ստեպ ստեպ
տկարութեանն ըմպեն. (Թ. Տէմ. Ե.
23). մի զնոսա իթը զմեղաւորս դա-
տիցես. և մի իթը օտարի ինչ զմիօն
ատիցես. *) Օ ի գիտե զայնպի-
սին առաքելն և ասէ՝ արգելուն առնել
կանայս տուէ. (Թ. Տէմ. Դ. 3.). մեկնեն
'ի կերակրոյ դոր աստուած հաստատ-
տեաց 'ի վայելչութիւն հաւատացե-
լոց։ Արդ թէպէտ և մեկնեալ իցես
դույսցանէ, մի իթը 'ի պղծութե-

*) (Թ. Տէմ. Դ. 4.)

Ենչ խորշեցիս և պահեցես. ապա թէ
ոչ վարձք ոչ գտանեն քեզ. ոյլ իբ-
րև ՚ի բարւոյ իմիքէ զմիտուդ ՚ի վեր
կալ: Ա ան այնորիկ որ երկնաւոր
բարիքն՝ պահեալ կայցեն քեզ: *)

38. **Օ գոյշ Լինիջիր դու՝ մի եր-**
բէք ուտիցես յախցանէ որ կուցն ա-
ռաջի եղեալ են. (ա. Կարճ. ը. 11:).
զի վասն կերակրոյ ոչ միայն այժմիկ,
այլ և յակօբայ որ այսը եկեղեցւոյ ա-
ռաջնորդ էր՝ փոյթ եղեւ: Եւ գընե
առաքելոցն և երիցանցն ամենեցունց
ամենայն հեթանոսաց առանձինն գըլ-
խաւոր հորին իրի հրովարտակս. նախ
առաւել առէ ՚ի բաց լինել ձեզ ՚ի զոհնել
կուցն կերակրոցն, ապա ՚ի հեղցուցկէ
և յորենէ և ՚ի պոռնկութէ: (Պատճ.
Ժ. 29): **Օ ՚ի բաղումք են այնք ՚ի**
մարդկանէ՝ որք իբրև զչար գաղան
ինչ շանց օրինակ կեանս կեալ՝ պիղծ
գաղանաց օրինակ զարիւն խոտեն՝ և
զհեղցուցիլն ուտեն անխտիր: Իսկ

*) (ա. Տիմօթ. դ. 7: 8: Առաք. ը.
17: 18:)

դու որ Վի ծառայդ ես կարգ դիր եր-
կիւղածուք ուտել և խտիը չուտել և
վս կերակրոյ այսչափ իսկ շատ եղիցին

39. Հանդերձ Լեցի քեզ պարզ
պարկեցու: Այի առ զարդարեալ այլ
առամփոփ զգենուլ. զի մի թողացեալ
լուծջիր. այլ առ ցրտոյ ջեռջիր՝ և
զմարմնոյ մերկունդ ծածկիցես: Օ ի
մի 'ի պատճառս մերկուն ծածկելոյ՝
յայլինչ պէտ ծանակուե անկանիցիս:

Ժառ. Ա առն Տաղմայ յարութեանն:

40. Անխայեա դու, աղաւեմ զքեզ
'ի մարմինդ այդ. և գիտասջիր զի 'ի
մեռելոց յառնելոց ես դու մարմնովդ
այդուիկ՝ յատեան դատաստանի մա-
տուցեալ: ապա թէ բան ինչ թերա-
հաւատութեան դիցես 'ի մտի քում,
չըսկ թէ հնար իցէ գործդ այդ
յարութէ յանձնէ քումմէ. խորհեաց
դու զաներեսոյթդ. (Բ. Արք. ԺԵ. 35).
և դու իսկ ինքնին ասա ցիս. յառաջ
քան զհարիւր ամ նուր էիր. յորպիսի
չնչին և 'ի փոքր կարգաց յայդպիսի
շարդ գեղեցկութեան մեծապատիւ

ղարդարեցար։ Խակ արդ՝ որ ԴՀԵՐՆ՝
յէ զարձուցանէ, զեղեալն և զան-
կեալն միւս անգամ անդրէն դարձու-
ցանել ոչ կարէ։

41. Որ վասն մեր սերմանեալցոռ
ըեան՝ ամի ամի զմեւեալն յարուցա-
նէ։ արդ զմեզ ինքն՝ վասն որոյ զայն
առնէ՝ դժուար ի՞նչ է յարուցանելը
(Քօհ. ԺՌ. 25.): Տեսանենս զիարդ-
ծառք այժմիկ ՚ի ձմերանդ՝ որ այդ-
չափ ամսովք անպտուղ և անտերև
կացեալ են։ այլ իբրև ձմեռանդ ան-
ցանէ՝ դարձեալ իբրև ՚ի մեռելոց
կենդանաց (Պահ. Հա. 3.): ոչ առա-
ւել ևս մեք դիւրագոյն կենդանացուք։
Գրաւաղանն մովսէսի ՚ի բուսոյ բար-
ւոցն ծննդեան՝ կամօք աստուծոյ ՚ի
փայտէ ՚ի մարմին փոխեցաւ. (Աւել.
Դ. 5). և մարդ անկեալ անդրէն ինք,
միւս անգամ ոչ հաւատացի յառ-
նել։

42. Ո՞ի անսար այնոցիկ որք ա-
սեմ, թէ մարմինս այս ո՞չ յառնէ։
Ո կայէ մարգարէն եսայի զի ասէ՝
կանգնեսցին մեռեալքն և յարիցեն

՚ի գերեզմանաց (Ղ. սայ. Եղ. 19:). և բա-
զումք թաղեալք յերկրի յարիցեն ՚ի
նոջեցելոցն ըստ բանին դանիէլի. սոքա
՚ի կեանս յաւիտենից: և նոք ՚ի տան-
ջանս և յամօթն յաւիտենից. (Ղառն.
ժբ. 2:). Իսկ արդ՝ յառնելն ՚ի մե-
ռելոց ամենայն մարդկան է. այլ ոչ
եթէ մի օրինակ է յարուե: Ամենե-
քեան զ յաւիտենականն միւսանգամ
առնումք զմարմինն. այլ ոչ եթէնման
միմեանց ամենեքին. այլ արդարքն՝ զի
մշտնջենաւորք եղեալ ընդ հրեշտակս
ծնցասցեն. իսկ մեղաւորքն զ յաւի-
տենից մեղացն իւրեանց տանջանս
ընկալեալ ըմբերել մարթասցեն:

Ժբ. Ա առն Տէրբութեան:

43. Ա ասն այսորիկ յառաջագոյն
աստուած մկրտութեամբն ապաշխա-
րութիւն ետ. զի զբազմութիւնս մե-
ղացն՝ մանաւանդ եթէ զամենայն բե-
ռինս իսկ ՚ի բաց թօթափեալ՝ և ՚ի
սուրբ հոգի անդ կնիք առեալ բա-
գորդք և բաժանորդք լիցուք կենա-
ցըն յաւիտենից: Այլ վասն մկրտուե
յառաջագոյն բազում ինչ ասացեալ

Ե. արդ՝ ՚ի մնացորդս՝ անդը կողմանն
ընծայութեան ՚ի վարդապետութիւն
մատիցուք:

Ժ. Ա. Պատու գըտյ սըբոյ:

44. Օ այս ուսուցանեն մեղ գիրք
աստուածաշունչք հնոց և նորոց կը-
տակարանաց, զե մի է տուիչ երկո-
ցունց կտակարանացն աստուած։ որ
՚ի նորումն երեեցաւ անդ Վրիստոս
և զհինն յառաջագոյն պատմեաց։ որ
՚ի ձեռն օրինացն և մարդարէիցն ՚ի
Վրիստոս եղեւ դաստիարակ։ Օ ի
մինչչեւ եկեալ էին հաւատքն՝ ընդ
օրինօքն արգելեալ կացաք։ և օրէնքն
դաստիարակք եղեն մեղ ՚ի Վրիս-
տոս։ (Վառալուա. Ղ. 22)։ Ա. ըդ եթէ
երբէք ՚ի հերիսիովտաց անտի լուի-
ցես եթէ հայհոյեն զօրէնս և զմար-
գարէս, պատասխանի տուր նոց փրկա-
կան բարբառով։ ոչ եկն Վրիստոս
քակել զօրէնս, այլ կատարել (Ա. Պատու.
Ե. 17)։

45. Ուսումնասէր մտօք գիտասջիր
յեկեղեցւոյ անտի՝ թէ որ են գիրք

Հնոց կտակարանաց և որ են հոր կը-
տակարանք։ Ե՛ս մի ի՞նչ փոյթ առ-
ներդ ծածկոյթ յայտնուեց. զե
եթէ այն որ յայտնապեսն է՝ չը-
գիտես, զի զվտարանդեօքն տադ-
նապեալ տառապիցիս։ Ի՞այց ըն-
թերցցիս զքսան և զերկուս գի-
րըս Հնոց կտակարանաց, որ յեօ-
թանասուն երկու թարգման-
չաց անտի թարգմանեալ են։

46. «Քանզի ՚ի ժամանակի իբրև
մեռաւ աղէքսանդրոս արքայ, մակե-
դոնացւոց թագաւորութիւնն ՚ի չորս
առաջս իշխանութեան բաժանեցաւ
անդը ՚ի կողմն բարիլացւոցն՝ մակե-
դոնացւոցն՝ և ասիացւոց՝ և եգիպտա-
ցւոց։ Անդ մի ոմն յեգիպտացւոցն թա-
գաւոր անուն ընթերցասէը թագաւոր
եղեալ հրաման ետ զամբ գիրս ժողո-
վել ՚ի դեմերտեայ փաղերանց, որ ամբ
դիւնապանացն գլուխ էր։ Յուղեցին
զհին մատեանս ամենայն։ և անտի
բերին զհնոց կտակարանացն և զմար-
գարէեց գիրսն յանդիման ընթեռ-

նուլ հմա: Եւ լաւ համարեցաւ այսպէս. զի ոչ եթէ բռնութեամբ և սաստիւ խնդրեցէք զգըեանն, այլ սերով կամեցաւ հաճել զմիտս պահապանացն: Իբրև կշուեաց ՚ի մտի իւրում եթէ ՚ի սաստիւ խնդիրն նեռգիչ խառնիցի ակամայն ժողովելոցն: իսկ որ ինքնակամն չնորհիցէ՝ ճշմարտիւ ժողովեսցին Եղիաջարու որ յայնմ ժամանակս քահանայապետ էր՝ ետտանել պարգևս բազումս սոյն իսկ ՚ի տաձարն երուսաղէմացւոց. և վեց վեց այր յերկոտասան ազգացն իսրայէլացւոց արս ընտիրս գիտութեամբ ՚ի թարգմանութիւն առ ինքն հրամայեաց կոչել. ապա զփորձ էառ, թէ իցէ սուրբ գիրք եթէ չիցէ՝ զհանդէսն ցաւցանէր:

47. Պարձեալ զի մի ինչ ընդ միմեանս խորհուրդ դիցեն թարգմանքն կարծեաց, ՚ի փոռանն անուն որ մօտ յաղէքսանդրիայն կայր թարգմանացն որ եկեալ էին առ իւրաքանչիւր սենեակ բաշխեալ՝ զամենայն գիրսն հրամայեաց թարգմանել: Եղքա իբ-

ըւե եկին յեօթահասուն երկու աւուրս
զամենայն մատեանս յիւրաքանչիւր
սենեկի անդ թարգմանեցին. և ա-
ռեալ զամենայն մատեանսն որ հոցա
չետ ընդ միմետանս խառնել՝ և 'ի մի
վայր ժողովէր, և գտանէր ոչ միայն
մտաց զօրութեամբ ՚ի մի միաբանու-
թիւն եկեալ, այլ ՚ի բահս և ՚ի բար-
բառս և ՚ի մի ձայնա միաբանեալ գը-
տան: Օ ի ոչ եւթե բան գիտութե
ինչ էր և խորաբանուի ձարտարուն,
որ մարդապէս լինելոց է, այլ հոգւոյ
սրբոյ. որ հոգին սուրբ յարանց ՚ի
սիրտս խօսեցաւ՝ և թարգմանուիքն
կատարէին:

48. Հայսցանէ դքսան երկու
գիրս ընթերցիր. այլ ՚ի ծածուկ
յայտնութիւնսն ամենելին մի
մերձեսցիս զի զայս դանխիջիր ըն-
թեւուուլ՝ զոր մանաւանդ համարձա-
կութեամբ յամենայն եկեղեցիս կար-
դամք: Աարի խմաստունք խմաստնա-
դոյնք և լաւագոյնք էին առաքեալ-
քըն և առաջին եպիսկոպոսքն՝
որք գլուխք եկեղեցեացն էին, որք

զայս հըամանս ետուն։ Արդ դու
որդի ես եկեղեցւոյն, մի զօրէնս եղա-
ծանել։ և զհնոց կտակարանացն որ-
պէս ասացաւն՝ զքսան երկու գիրսն
ընթեռնուցնւա։ Օ ի թէ ուսումնա-
սէր ոք իցես որպէս ասեմդ յանուանէ
ի մտի ունել փութասջիր։

49. Արդ հնոց կտակարանացդ
մովսէսին եւ գիրք ծնունդքն։
Եւըն զետականքն թիւքն երկո-
րորդ օրէնքն իւշ յեսու որդի
նաւեայ։ Իւշ գիրք դատաւորաց՝
հոռութաւ հանդերձ եօթներորդ
թուել։ Երկու այլոց մատենագիր
գրոց առաջին և երկրորդ թա-
գաւորութեանն եբբայեցւոց ընդ
մի համար են։ Այսպէս և ընդ
մի համար է երբորդըն և չոր-
րորդն այս օրինակ և գիրք
մնացորդացն առաջին և երկ-
րորդն ընդ մի համար են։ Իւշ
եղբ առաջին և երկրորդն ընդ մի
համար են երկոքին Երկոտա-
սիաներորդ գիրք՝ եսթեր։

Արդ մատենաւոր գիրք այս են։

50. Խակ ստէքերով գիրք. Ե.
յօբ. և սաղմոսն. և զօդնութի.
և էկլէսիաստիկէս. և օքհնութիք
օքհնութեանց: Յայսը վերայ Տոբ-
գառէեցն. Ե. գիրք. երկոտասան
մարդարէքն. եսայի երեմիա. բա-
րուքայ թղթով հանդերձ և ողբով-
քըն. և եղեկիէլ. և դանիէլ: Ա-
հա քսան երկու գիրք հնոց կտա-
կարանացն:

51. Խակ ՚ի նորոց կտակարանաց
անտօն՝ չորք աւետարանք միայն.
խակ ոյլքն սուտ անուանեալ և գրեալ
և մնաս ընթերցեալ ընթերցողացն:
Այլ գրեցին և մանիքեցիք թովմայի
գլուխ աւետարան որում անուշա-
հոտ աւետարանացն. անուն եղեալ
կարդան ծեփեալ շաղախ առ ապակա-
նել զոգի միամտացն: Այլ դու ըն-
կալջիր և զգործսն երկոտասան ա-
ռաքելոցն յայսը վերայ. և զեօթն
թուղթս գլխաւորսն յակօքայ,
և պետրոսի. Ռ, և յօհաննու ե-
րեք, և զյուդայի գլխաւոր
թուղթն: ՚ վերայ ամենայի իք-

ըե մատանի հաստատութեան ՚ի վերայ եղեալ զպօղոսի չորեքտասան թուղթսն Այլն ամ ՚ի բացէ կացցէ. և զոր միանդամ յեկեղեցիս ոչ ընթեռնելի են, զայն և առանձինն մի ընթեռնուցուս:

52. Ե՛ւ վասն այօր ամենայնի այօջափ խորշիջիր յամենայն սատանայական հնաբիցն. և մի ՚ի հաւանութե մտանիցես վիշապին ապստամբի. որ ՚ի բարեաց հաստատութենէ անտի անձամբ անձին ինքնակամ եգիտ զանձինն կոծումն. որ հրապուրել կարէ զհաւանեալն, բայց ստիպել և տագնապել "չ զոք կարէ: Ե՛ւ մի յաստեղագիտութիւնս ինչ հաւատար. և մի ՚ի հաւահմայս. և մի ՚ի հմայեալ հայելի ամենեին հայեսցիս և մի ՚ի մուշտիտութիւն կուոց մնոտեաց մոլորութիւնս հայիցիս: Ո՞՞ ՚ի հարցուկս, և մի ՚ի դիւթութեան և թովչուն և զմեռելահարցութեանց դիւթունս. և ճառիւք չափ լսելով՝ յահնձն մի առնուր: Դա բաց ւ ինիջիր յամենայն ազգապղծութենէ. մի զորկորուու-

թեան զկնի լինիցիս. մի զբարս գետութեան զկնի լինիցիս. Այլև մի արծաթասիրութեան և վաշխից ամենայնի ՚ի վերայ թռանիջիր. և մի ՚ի ժողովս հեթանոսաց խառնիցիս. և մի զորյութենն ինչ և ընդ անձն կապեն. մերձեցուսցես ՚ի քեզ ՚Ն բաց փախիջիր յամ կըպակամուտ պղծուեց. Օ գոյշ լինիջիր, գուցէ երբէք ՚ի շամբառութիւն. կամ հրէութիւն կործանեսցիս. զի փքկեաց զքեզ տէր Յիսուս. և հրամանք առաքելոցն. Ե՛ւ յամենայն շաբաթապահ և շաբաթախտիր կրօնից զանձն քո ՚ի բաց պահեսջիր. և մի պիղծ ինչ կմ խառնակ զհամարձակեալ կերակուրսն համարեսցիս:

54. Առաւելապէս ատեսջիր զամենայն ժողովս հերիսիովտաց. Ե՛ւ ամենայնին զանձն քո ամբացուսջիր պահօք և ողորմութեամբը՝ զի զգատութեամբ. և առաքինութեն գործով կեալ մարթասցես. Օ ի զմի աւազանին զփրկութիւնն յանձին քում բարձեալ ՚ի ժողովս զօրացն երկնա-

որպաց արժանի լիցես մտանել առաջի հօրն երկնաւորի. և արժանի լիցես պսակացն որ պատրաստեալ է ՚ի ձեռանէ տեառն մերոյ Յիսուսի ՚ին,
՚Այս փառք և պատիճ յաւիտեանս.

Ըմբռ:



